ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, գ.Արծնի
Հեռ. 093-01-82-88
Էլ.Փոստ՝ artsni.lori@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Արծնի համայնքի ավագանու **N 11-Ա , N 12-Ա** որոշումները և համայնքի ղեկավարի **N 02** կարգադրությունը:

Առդիր՝ 3 թերթ

Համայնքի ղեկավար՝ _____ Խ.Խաչանեսյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

գ. Արծնի
05.06.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, հասցե գ. Արծնի,
հեռ.093-01-82-88 էլ. փոստ՝ artsni.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական, 11 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Արծնի համայնքի ավագանին

որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Արծնի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Արծնի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 18-Ա որոշումը:
3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել որոշումից բխող «Արծնի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագիծը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 06--ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1 Մկրտումյան Վանյա			
2 Փնջոյան Վերչալույս			
3 Քոթոյան Իրինա			

Արծնի **համայնքի ղեկավար՝** _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

2017 թ. Հունիսի 05
գ.Արծնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, հասցե գ. Արծնի,
հեռ.093-01-82-88 էլ. փոստ՝ artsni.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական, 12-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Արծնի համայնքի ավագանին

որոշում է.

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1.Քոթոյան Մարիաննա համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,

2.Էգնատոսյան Խաչիկ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

3 Մկրտումյան Վանյա համայնքապետարանի ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար,

4.Քոթոյան Իրինա ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

5.Փնջոյան Վերչալույս ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

6 Եղյան Սերգեյ համայնքի բնակիչ հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

7.Մկոյան Տալիտա համայնքի բնակչուհի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1 Մկրտումյան Վանյա			
2 Փնջոյան Վերչալույս			
3 Քոթոյան Իրինա			

Արծնի համայնքի ղեկավար՝ Խ.Խաչանեսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արծնի համայնք, հասցե գ. Արծնի,
հեռ.093-01-82-88 էլ. փոստ՝ artsni.lori@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«05» հունիսի 2017 թվական, 02-Ա

ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 06-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով և համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 05-ի N12-Ա որոշմամբ՝

կարգադրում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2014 թվականի նոյեմբերի 19-ի <<Հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 06-Ա կարգադրությունը:

2. Կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԱՐԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Խ.Խաչանեսյան